

2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ ԱՄՍԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ ԱՄԻՍ ԸՆԿԱԾ
ԺԱՄԱՆԱԿԱԿԱՏՎԱԾՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից աշխատանքներ են տարվել «Եվրոպական հարևանության քաղաքականության ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2014-2015 թթ. միջոցառումների ցանկի» 101-րդ, 103-րդ և 104-րդ կետերի իրականացման ուղղությամբ:

ԱՊՀ երիտասարդության հարցերի խորհրդում 2014 թվականին Հայաստանի Հանրապետության համանախագահության շրջանակներում հունիսի 11-14-ը ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում տեղի է ունեցել ԱՊՀ երիտասարդության հարցերի խորհրդի հերթական նիստը, որին մասնակցել են Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության ներկայացուցիչներ:

Նիստում ԱՊՀ երիտասարդության հարցերի խորհրդի համանախագահ Արսեն Քարամյանի կողմից ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում իրականացվող երիտասարդական պետական քաղաքականությունը:

Սերտ համագործակցություն է իրականացվել նաև ԱՊՀ մասնակից երկրների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի մասնակիցների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի խորհրդի հետ: 2014 թվականի հունիսի 18-19-ը Ղրղզստանի Չուլպոն-Աթա քաղաքում տեղի է ունեցել ԱՊՀ մասնակից երկրների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի մասնակիցների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի խորհրդի նիստը, որտեղ քննարկվել են ԱՊՀ մասնակից երկրների մինչև 2020 թվականն ընկած ժամանակամիջոցի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ռազմավարության իրականացմանն ուղղված 2013 թվականի ծրագրի իրականացման արդյունքները, մինչև 2020 թ. ընկած ժամանակամիջոցում ԱՊՀ-ում ազգային մարզաձևերի պահպանման ու զարգացման ծրագրի և դրա իրականացմանն ուղղված 2015-2017 թթ. միջոցառումների ծրագիրը: ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Արտաշես Նազարյանի կողմից ներկայացվել է ՀՀ-ում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում տարվող քաղաքականությունը, մասնավորապես՝ որպես սպորտի մասսայականությանը նպաստող հաջողված օրինակ, որը կարելի է տարածել ԱՊՀ մասնակից բոլոր երկրներում, ներկայացվել է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական մրցույթը:

Մի շարք երկրների սպորտի պատասխանատու մարմինների հետ սպորտի ոլորտում համագործակցության նպատակով մշակվել են միջգերատեսչական համաձայնագրեր, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Ռուսաստանի Դաշնության սպորտի նախարարության միջև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համագործակցության մասին», «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Ղազախստանի Հանրապետության մշակույթի և սպորտի նախարարության միջև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համագործակցության մասին», «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Կուբայի Հանրապետության սպորտի, ֆիզիկական կուլտուրայի և ակտիվ հանգստի ինստիտուտի միջև սպորտի բնագավառում համագործակցության մասին» միջգերատեսչական համաձայնագրերի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության մշակույթի, սպորտի և տուրիզմի նախարարության միջև սպորտի ոլորտում համագործակցության մասին» համագործակցության ծրագրի և «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության միջև սպորտի բնագավառում համագործակցության մասին» միջգերատեսչական փոխըմբռնման հուշագրի նախագծերը արդեն անցել են ներպետական համաձայնեցման փուլը և փոխանցվել են ՀՀ արտաքին գործերի նախարարությանը:

2014 թվականի հուլիսի 9-ին Մոնտեվիդեոյում ստորագրվել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ուրուգվայի Արևելյան Հանրապետության կառավարության միջև սպորտի բնագավառում համագործակցության մասին» միջկառավարական համաձայնագիրը և հաստատվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի նոյեմբերի 18-ի ՆՀ-577-Ն հրամանագրով:

Սպորտի մասին մասնակի ընդլայնված համաձայնագրի (EPAS) հետ համագործակցության շրջանակներում 2014 թվականի սեպտեմբերի 17-19-ը Մազլինգենում (Շվեյցարիայի Համադաշնություն) տեղի է ունեցել Եվրոպայի խորհրդի սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի և Շվեյցարիայի Համադաշնության կառավարության կողմից կազմակերպվող մարզական մրցումների մեքենայությունների հարցերի Եվրոպայի խորհրդի սպորտի հարցերի նախարարների համաժողովը, որին մասնակցել է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Գաբրիել Ղազարյանը: Համաժողովի ընթացքում՝ 2014 թվականի սեպտեմբերի 18-ին, ստորագրվել է «Մարզական մրցումների մեքենայությունների վերաբերյալ ԵԽ կոնվենցիան»:

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Վրաստանի համանուն նախարարության միջև մշակվել և 2014 թվականի նոյեմբերի 28-ին նախարար Գաբրիել Ղազարյանի Թբիլիսի կատարած այցի ընթացքում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Վրաստանի սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության միջև կնքված սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրի դրույթների իրականացման 2015-2016 թթ. գործողությունների ծրագիրը»:

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Գաբրիել Ղազարյանը 2014 թվականի դեկտեմբերի 10-12-ը Ալմաթիում մասնակցել է Ղազախստանի Հանրապետության մշակույթի և սպորտի նախարարության կողմից կազմակերպված սպորտային բժշկության վերաբերյալ միջազգային սեմինար-խորհրդակցությանը, որտեղ Ղազախստանի Հանրապետության սպորտի և ֆիզիկական կուլտուրայի հարցերի կոմիտեի նախագահ Իլիյար Կանազատովի հետ ստորագրել է հուշագիր ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և սպորտային բժշկության զարգացման ուղղությամբ աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով:

2015 թվականի փետրվարի 17-19-ը Բելառուսի Հանրապետության սպորտի և տուրիզմի նախարար Ա. Շամկոյի հրավերով նախարար Գ. Ղազարյանը՝ որպես պատվավոր հյուր, ներկա է գտնվել բիաթլոնի պատանիների և երիտասարդների առաջնությանը, որից հետո նախարարները քննարկել են սպորտի ոլորտում երկուստեք համագործակցության ընդլայնման հարցեր:

2015 թվականի հունիսի 3-5-ը Սոչիում կայանալիք ԱՊՀ անդամ պետությունների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի խորհրդի հերթական նիստի ընթացքում նախատեսվում է «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Ռուսաստանի Դաշնության սպորտի նախարարության միջև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համագործակցության մասին» հուշագրի ստորագրումը:

Աշխատանքներ են կատարվում նաև միջազգային մի շարք հեղինակավոր կազմակերպությունների հետ (Համաշխարհային հակադոպինգային գործակալություն (WADA), Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագիր (EPAS), Ֆրանկաֆոնիա) և այլն: